ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇՏԱՊՈՀՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/11-1

ք. Երևան «30» IV 2020թ.

Առողջապահության նախարարությունը՝ ի դեմս Լ. Քոչարյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կարկոմավտո» ՍՊԸ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Վ. Ղուկասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **298,200,000 (երկու հարյուր իննսունութ միլիոն երկու հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը՝ համաձայն երաշխիքային գրքույկի պայմանների: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Առողջապահության նախարարություն	« Կարկոմավտո » ՍՊԸ
ք. Երևան, Կառավարության շենք N 3	ք.Երևան,Կոմիտաս 47
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	« Էյչ էս բի Սի բանկ Հայաստան » ՓԲԸ
	Հ/Հ 001094077001
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 00059627
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ

Հավելված N 1
«30» 12 2020 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/11-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
Հ/Հ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	34111220/502	Շտապօգնության մեքենա (գծային տիպի)	ՈՒԱԶ, շտապօգնության մեքենա, «Ուլյանովսկի ավտոմեքենաշինական գործարան» ՍՊԸ, ՌԴ	Թափքի գույնը (համաձայնեցվում է պատվիրատուի հետ) Շարժիչային տեսակը՝ բենզինային Շարժիչի ծավալը ՝ 2,7 լիտր Շարժիչի հզորությունը՝ 112 ձիաուժ Արտանետումների ստանդարտը՝ EURO V Փոխանցման տուփը՝ մեխանիկական, 5 աստիճան Վառելիքի բաքը՝ 75Լ Անիվային բանաձևը՝ 4x4 Հիդրավլիկ ղեկ Առջևի նստատեղերի ամրագոտիներ ABS արգելակման համակարգ	հատ	14 200 000	298 200 000	21	Ք. Երևան, Տիտոգրանյան 14/10	21	Համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքումից հետո 100-180 օրերի ընթացքում

				Բաժանարար տուփը՝ 2 աստիճան Հենքի տիպը՝ ամբողջական մետաղային Մեքենան նոր է, չօգտագործված Տրանսպորտային միջոցների արտաքին չափերը Երկարությունը՝ 4390մմ Լայնությունը՝ 1940մմ (առանց կողային հայելիների) Բարձրությունը՝ 2570մմ Անիվների հենքը՝ 2300մմ Շտապօգնության մեքենային բժշկական խցիկի ներքին չափսերը պետք է համապատասխանեն. Երկարությունը բժշկական խցիկի հարթ մակերևույթի հետևի պատի ներսի մասից մինչև միջնապատ՝ 2733մմ Լայնությունը (հատակից 800մմ բարձրության վրա) ՝ 1818մմ Բժշկական խցիկի հատակի բարձրությունը գետնից 565մմ Բարձրությունը (հատակից մինչև առաստաղ՝ աշխատանքային գոտիում)՝ 1600մմ Շրջադարձման շրջանը՝ 6.8մ Հակամառախուղային							

				լուսարձակներ Անիվը՝ 16″ Անվադողերը՝ 225/75 R16″ Բեռնատարողությունն ամբողջական կահավորելուց, սարքերով և սարքավորումներով, ինչպես նաև բժշկական պարագաներով հագեցնելուց հետո՝ ոչ պակաս քան 450 կգ: Հիմնական կոնֆիգուրացիա Արտաքին մաս Շարժական պատուհան բժշկական խցիկի և վարորդի միջև Արտակարգ իրավիճակների համար նախատեսված տանիքի դիտանցք՝ վթարային ելքի առկայություն Դիտանցքի ձևը պետք է թույլ տա այն օգտագործել որպես արտակարգ իրավիճակի համար նախատեսված ելք մեքենայի խցիկից Բժշկական սրահի պատուհանների փայլատ՝ 2/3 (матированные)ապակիներ Հավելյալ ձայնամեկուսացում, պատերի, առաստաղի և դռների ջերմամեկուսացում Պլաստիկ անիվային կամարների առկայություն							

				Սրահի կողային դռների սահմանափակիչ՝ բաց դիրքում ֆիքսելու համար Հետևի և կողային դռների ֆիքսատորի առկայություն Հետևի դռների 180o +180o բացվելու հնարավորություն Կողային բացվող դռան աստիճանի առկայություն Ետևի աստիճանի առկայություն Արտաքին ձևավորման և շտապ օգնության լոգոյի առկայություն (համաձայնեցվում է պատվիրատուի հետ) Լուսաազդանշանային բարձրախոս համակարգ տանիքի վրա Լույս արտացոլող պիտակավորում (համաձայնեցվում է պատվիրատուի հետ) Ինտերիեր - ուղևորների խցիկ Բժիշկի փափուկ աթոռի առկայություն Նստարան սրահի առաջնամասում Ուղեկցորդի նստարանի առկայություն Սեղան էլեկտրական լվացարանով և 2 տարաներով մաքուր և օգտագործված ջրի համար Առջևի և կողային							

				դռների բռնակների (ոорукки) առկայություն Հատակը՝ անջրանցիկ, հակաստատիկ, չսղացող, դիմացկուն՝ լվացվող և ախտահանող նյութերի նկատմամբ Բոլոր կարերի հիդրոմեկուսացում Պատերի, դռների և առաստաղի երեսապատում, բոլոր միանցումների հիդրոմեկուսացում Առաստաղային ամրացմամբ IV տիպի բռնիչի առկայություն Ներերակային միջամտությունների համար նախատեսված բռնակ Արտակարգ իրավիճակների համար նախատեսված մուրճի առկայություն՝ 1հատ Կրակմարիչ 2 հատ, տարողությունը՝ 5 լ Օդափոխության համակարգի առկայություն Սրահի ինքնավար տաքացուցիչի առկայություն Օդորակման կլիմայի վերահսկում Բժշկական սարքավորումների և պարագաների համար նախատեսված բժշկական պահարանի առկայություն Բժշկական սրահում օգտագործվող բոլոր նյութերը, ներառյալ կահույքը,							

				դիմացկուն՝ լվացման և ախտահանող նյութերի նկատմամբ Թթվածնային վահանակի առկայություն՝ ոչ պակաս քան երկու արագ հանվող թթվածնային ելքերով (medical oxygen outlet) DISS ստանդարտի Կենտրոնացված թթվածնային համակարգի առկայություն (հավաքված համապատասխան պղնձյա խողովակներով, միացուցիչներով, եռաբաշխիչներով և համապատասխան թթվածնային ելքերով (medical oxygen outlet) DISS ստանդարտի)) Թթվածնային 2 հատ 10 լիտր բալոնների ամրացման համար նախատեսված համապատասխան ամրացուցիչներ, ինչպես նաև համակարգի վրա տեղադրված բարձր ճնշման ռեդուկտոր (բարձր և ցածր ճնշումները ցույց տվող մանոմետրերով) Ռեդուկտորի թթվածնային բալոնին միացման պարույրը G3/4 չափսի: Թթվածնի բալոնների և խողովակների մասում օդափոխության համակարգ Լուսավորություն							

				Ընդհանուր լուսավորություն՝ 100 լյուքս կամ համարժեք LED Աշխատանքային դաշտը՝ 150 լյուքս կամ համարժեք LED Պատգարակի մակերևույթը՝ 150 լյուքս կամ համարժեք LED Շտապօգնության մեքենաների բժշկական խցում լրացուցիչ լամպ 1000 լյուքս կամ համարժեք LED, լույսի դաշտի տրամագիծը պատգարակի մակերևույթի վրա՝ 200մմ Շտապօգնության մեքենայի հետևի և կողային դռների լուսավորվածություն՝ 30 լյուքս կամ համարժեք LED Կողային դռան բացվածքի լուսավորություն Հետևի և կողային դռների վերևում լուսավորության առկայություն Բժշկական սրահում լուսատուներով լուսավորութան առկայություն Մեխանիկական և էլեկտրական Մարտկոց 110 Ա/ժ Լրացուցիչ մարտկոց 70 Ա/ժ Էլեկտրական վարդակների կառավարում հիմնական հարթակից (12V - 2 հատ, 220V - 2 հատ)							

				12-ից դեպի 220V ինվերտոր և կոնվերտոր (հզորությունը 1.5 ԿՎՏ) Էլեկտրաէներգիայի արտաքին ներածման համակարգ 220V վարդակից (15 մ) Երկտոնային ազդանշանային, արտաքին բարձրախոս և բարձր ձայնային համակարգեր Ներքին էլեկտրական սարքավորումների համար նախատեսված կառավարման վահանակ Կենտրոնական փական և հակաառևանգման ազդանշանային համակարգ Ավտոմեքենայի հողանցման Տեսաձայնագրիչ Այլ պահանջներ Օդի աղտոտումը խցիկում ջեռուցման և օդափոխության համակարգերի գործարկման ժամանակ համապատասխանում է ГОСТ 33554-ին կամ համարժեք Շտապօգնության մեքենայի ներսում աղմուկի մակարդակը համապատասխանում է ГОСТ 33555-ին կամ համարժեք Ջեռուցման, օդորակման և օդափոխության համակարգերը							

				համապատասխանում են ГОСТ 33665 կամ համարժեք Բժշկական խցիկում օդի ջերմաստիճանը համապատասխանում է ГОСТ 33665 կամ համարժեք Բժշկական շտապօգնության մեքենայիհատակի, առաստաղի, կողային պանելների ջերմաեկուսացումը համապատասխանում է ГОСТ 33665 կամ համարժեք Նշում՝ Այլ պահանջների բաժնում նշված պահանջների համար արտադրողը տրամադրում է համապատասխան վկայագրեր: Ավտոմոբիլային սարքավորումներ Պահեստային անիվ (ամբողջական չափ) ՝ 1 հատ, դյուրակիր շարժական լապտեր՝ 1 հատ, օգտագործողի ձեռնարկ՝ 1 հատ, արտակարգ իրավիճակների 1 հավաքածու վարորդի համար, ինչպես նաև համապատասխան չափսի 1 ձմեռային շղթաների հավաքածու: Ստանդարտներ (փաստաթղթային վկայագրեր (վկայագրերի պատճեն).							

				CEN - EN 1789 կամ ГОСТ 33665 կամ այլ չափորոշիչներով կարգավորվող շտապօգնության մեքենաներ Ավտոմեքենա վերակառուցող կազմակերպությունը (Ընկերությունը, որը զբաղվում է մեքենայի՝դեպի շտապօգնության մեքենաներ վերակառուցմամբ), ունի ISO 9001 վկայական Այդ ընկերությունը տրամադրում է նախագծային փաստաթղթեր մեքենայի՝ դեպի շտապ օգնության մեքենաներ վերակառուցման / տեղադրված հավելվածների (պարագաների և սարքավորումների) վերաբերյալ: Մեքենայի երաշխիքը տարածվում է մեքենայի բոլոր հանգույցների և օգտագործվող հավաքածուների վրա, առնվազն 1 տարվա շահագործման ընթացքում կամ ոչ պակաս քան 80 000 կմ վազքի համար, համաձայն երաշխիքի ներկայացված արտադրողի կողմից: Երաշխիքը տարածվում է նաև մեքենան կոռոզիայի ենթարկման դեպքում:							

				Երաշխիքը չի տարածվում նորմալ մաշվածության, ինչպես նաև մեքենայի գերծանրաբեռնվածության և ոչ մասնագիտացված շահագործման դեպքերում: Արտադրողի կամ մասնակցի հայտարարություն, որ պայմանագրի շրջանակներում մատակարարվող ապրանքները (առաջարկվող մոդելները), պետք է արտադրված լինեն, ոչ ավել, քան 12 ամիս առաջ՝ հայտի բացման օրվանից Պահեստամասերով ապահովման ժամանակահատված՝ որ պակաս քան 4 (չորս) տարի: Արտադրողի կամ դիստրիբյուտորի ավտորիզացիա Պատգարակ Ավտոմատ պատգարակ, որի օգտագործման համար (իջեցնել և բարձրացնել) հարկավոր է մեկ անձ: Պատրաստված է բարձր ամրության ալյումինից, առկա են անվտանգության ամրակներ: Բեռնունակությունը՝ ոչ պակաս քան 150 կգ Սայլակը հագեցած է շտապօգնության մեքենայում							

				բեռնման ժամանակ ոտքերը ծալելու հարմար մեխանիզմով Պատգարակի չափսերը հարմարեցված են համապատասխան շտապօգնության մեքենային Բազմաֆունկցիոնալ ավտոմատ պատգարակը ունի տարբեր կարգավորելի բարձրություններ Մակերեսը պատրաստված է փափուկ բարձից և կարգավորելի թիկնոցից, ինչը թույլ կտա հիվանդներին իրենց հարմարավետ զգալ Կարգավորվող թիկնոցի անկյունը՝ ոչ պակաս քան 0-ից 60 աստիճանի Ստանդարտներ (փաստաթղթային վկայագրեր (վկայագրերի պատճեն) ГОСТ 16940-89կամ համարժեք Տրամադրվում են անհրաժեշտ փաստաթղթեր՝ Արտադրողի կամ դիստրիբյուտորի ավտորիզացիա: Ավտորիզացիայի բնօրինակն անհրաժեշտ է ներկայացնել բոլոր սարքավորումների համար Պահեստամասերով ապահովման ժամանակահատվածը՝ որ պակաս քան 4 (չորս) տարի Արտադրողի կամ							

				Մասնակիցի հայտարարությունը առ այն, որ պայմանագրի շրջանակներում մատակարարվող ապրանքները (առաջարկվող մոդելները) պետք է արտադրված լինեն ոչ ավել, քան 12 ամիս առաջ՝ հայտի բացման օրվանից Բոլոր բժշկական սարքավորումների համար, օգտագործողի ձեռնարկը ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, ինչպես նաև այդ ձեռնարկների հայերեն թարգմանությունը:							

ԳՆՈՐԴ

Առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

« Կարկոմավտո » ՍՊԸ
ք.Երևան,Կոմիտաս 47
« Էյչ էս բի Սի բանկ Հայաստան » ՓԲԸ
Հ/Հ 00109407001
ՀՎՀՀ 00059627

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«30» 12 2020թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/11-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի														
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
Հ/Հ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	34111220/502	Շտապօգնության մեքենա (գծային տիպի)													

ԳՆՈՐԴ
Առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
« Կարկոմավտո » ՍՊԸ
ք.Երևան,Կոմիտաս 47
« Էյչ էս բի Սի բանկ Հայաստան » ՓԲԸ
Հ/Հ 001094077001
ՀՎՀՀ 00059627

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
« » 2020թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/11-» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2020թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/11-» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԿԱՐԿՈՄԱՎՏՈ» ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ 30.04.20թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/11-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇՏԱՊՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «08» «VI» 2020թ.

1. Առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Լ. Քոչարյանի մի կողմից, և «Կարկոմավտո» ՍՊԸ-ն ի դեմս գլխավոր տնօրեն Վ. Ղուկասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 30.04.20թ. կնքված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/11-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.1 Պայմանագրի Հավելված 2-ում՝ «Վճարման ժամանակացույց»-ում կատարել փոփոխություն՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 1-ի:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Առողջապահության նախարարություն	«Կարկոմավտո» ՍՊԸ
Կառավարական տուն 3	Ք.Երևան, Կոմիտաս 47
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ Էս բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011024230	Հ/Հ 217001094077001
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 00059627
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«30» Ապրիլ 2020թ. կնքված
ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2020/11-1 ծածկագրով պայմանագրի
Հավելված N 1
« » 2020թ. Կնքված թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի												
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում									
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	34111220/502	Շտապօգնության մեքենա (գծային տիպի)	-	-	298,200,000	298,200,000	298,200,000	298,200,000	298,200,000	298,200,000	**298,200,000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011024230
ՀՎՀՀ 02507171

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Կարկոմավտո» ՍՊԸ
Ք.Երևան, Կոմիտաս 47
«Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 21700109407 7001
ՀՎՀՀ 00059627

(ստորագրություն)

Կ.Տ.